



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 սեպտեմբերի 2012 թվականի N 1207 - Ն

ԱԽՏԱԲԱՆԱԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԴՐԱՆՑ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել՝

1) ախտաբանաանատոմիական հետազոտությունների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ախտաբանաանատոմիական հետազոտությունների անցկացման և դրանց արդյունքները պետական մարմիններին և այլ անձանց տրամադրելու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 29
Երևան



Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թվականի
սեպտեմբերի 20-ի N 1207 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱԽՏԱԲԱՆԱԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Բիոպսիոն հետազոտություն
2. Ցիտոլոգիական հետազոտություն
3. Ախտաբանաանատոմիական հերձում (աուտոպսիա)
4. Ախտաբանաանատոմիական հերձման (աուտոպսիա)
նյութի հիստոլոգիական հետազոտություն
5. Ընկերքի հետազոտություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԱԽՏԱԲԱՆԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ
ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են ախտաբանաանատոմիական հետազոտությունների անցկացման և դրանց արդյունքները պետական մարմիններին և այլ անձանց տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Ախտաբանաանատոմիական հետազոտությունների իրականացման հիմնական խնդիրներն են՝

1) պացիենտի կյանքի ընթացքում ախտորոշման և իրականացվող բուժման արդյունավետության որոշումը.

2) մահվան պատճառների հայտնաբերումը և բուժական-ախտորոշիչ միջամտությունների որակի վերահսկումը.

3) Հայաստանի Հանրապետությունում հիվանդացության և մահացության հանգամանքների հետազոտումը՝ հիվանդության ընթացքի և մահացության պատճառների մասին ճշգրիտ վիճակագրական տվյալների ստացման նպատակով.

4) կազմակերպչական, կանխարգելիչ և այլ միջոցառումների մշակումը և բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնող մասնագետներին ներկայացնելը՝ բժշկական հաստատությունների աշխատանքի որակի բարելավման նպատակով.

5) բժշկական միջամտության հետևանքների գնահատումը.

6) հիվանդությունների հետմահու ախտորոշումը.

7) մահվան անմիջական պատճառի, առաջնային և հիմնական հիվանդությունների որոշումը, սուր վարակիչ և հատուկ վտանգավոր վարակների հայտնաբերումը:

II. ԱՌՏԱԲԱՆԱԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3. Ախտաբանաանատոմիական հետազոտությունները կատարվում են բժշկական օգնության և սպասարկման համապատասխան տեսակի համար լիցենզավորված հաստատությունում (այսուհետ՝ հաստատություն)՝ համապատասխան որակավորում ունեցող մասնագետ-բժիշկների կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կարգին համապատասխան:

4. Բիոպսիոն հետազոտությունը նախավիրահատական և հետվիրահատական շրջանում հյուսվածքների ու օրգանների՝ մորֆոլոգիական մեթոդներով իրականացվող ախտաբանաանատոմիական հետազոտությունն է, որն իրականացվում է կենդանության օրոք հիվանդության ախտորոշման և անցկացվող բուժման արդյունավետության նպատակով:

5. Ցիտոլոգիական հետազոտությունը նախավիրահատական և հետվիրահատական շրջանում հյուսվածքների՝ ցիտոլոգիական մեթոդներով իրականացվող ախտաբանաանատոմիական հետազոտությունն է, որն իրականացվում է՝ կենդանության օրոք հիվանդության ախտորոշման նպատակով:

6. Ախտաբանաանատոմիական հերձումը (աուտոպսիա) հանգուցյալի մարմնի ախտաբանաանատոմիական հետազոտությունն է, որն իրականացվում է մահվան պատճառի և բուժական պրոցեսի հսկողության նպատակով:

7. Ախտաբանաանատոմիական հերձման նյութի հիստոլոգիական հետազոտությունն ախտաբանաանատոմիական հերձման արդյունքում վերցված հյուսվածքների և օրգանների

հիստորիոգիական հետազոտությունն է, որն իրականացվում է մահվան պատճառը հաստատելու նպատակով:

8. Ընկերքի հետազոտությունն ախտաբանաանատոմիական հետազոտությունն է՝ ուղղված պտղի և (կամ) մոր հիվանդությունների վրա ազդեցություն ունեցող ախտաբանական պրոցեսների ախտորոշմանը:

9. Ախտաբանաանատոմիական հերձման և բիոպսիոն հետազոտության արդյունքում իրականացվում է վերցված հյուսվածքների, օրգանների արխիվացում՝ առնվազն երեք տարով:

10. Ախտաբանաանատոմիական հետազոտության արդյունքում կազմվում է եզրակացություն, որում նշվում են պացիենտի ազգանունը, անունը, հայրանունը, սեռը, տարիքը, գործիքային ու լաբորատոր հետազոտությունների արդյունքները:

11. Ախտաբանաանատոմիական հետազոտությունից հետո ախտորոշումը և եզրակացությունը գրանցվում կամ կցվում են հիվանդության (ծննդաբերության) պատմությանը:

12. Հետազոտության կատարման ընթացքում ախտաբանաանատոմը՝

- 1) պահպանում է պացիենտի պատիվն ու արժանապատվությունը.
- 2) ցուցաբերում է հոգատար և հարգալից վերաբերմունք պացիենտի նկատմամբ.
- 3) պահպանում է հետազոտության ընթացքում ստացված տեղեկությունների գաղտնիությունը՝ բացառությամբ սույն կարգով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

4) ախտաբանաանատոմիական հետազոտության արդյունքում հանգում է գիտականորեն հիմնավորված և օբյեկտիվ եզրակացությունների.

5) պահպանում է սույն կարգով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջները:

III. ԱԽՏԱԲԱՆԱԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ

13. Հետազոտության կատարման ընթացքում ստացված տեղեկությունները, ինչպես նաև հետազոտության վերաբերյալ եզրակացությունը համարվում են բժշկական գաղտնիք և պահպանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Հետազոտության արդյունքները հաստատության ղեկավարի կողմից տրամադրվում են՝

1) պացիենտին կամ օրինական ներկայացուցչին.

2) ախտաբանաանատոմիական հերձման վերաբերյալ եզրակացությունը՝ նաև ընտանիքի անդամներին՝ վերջիններիս պահանջի դեպքում.

3) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ ոստիկանությանը, դատախազությանը, ազգային անվտանգության ծառայությանը, հատուկ քննչական ծառայությանը, դատարանին:

15. Ախտաբանաանատոմիական հետազոտության վերաբերյալ եզրակացությունը սույն կարգի 14-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված անձանց տրամադրվում է ախտաբանաանատոմիական հետազոտության ավարտից հետո 5-օրյա ժամկետում, իսկ սույն կարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված մարմիններին՝ հարցումն ստանալուց հետո 2-օրյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

